

Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ

№ 6

(200)

2007 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 31-ին կայացավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին նաև ինստիտուտների տնօրեններ, ակադեմիական գիտական և այլ ստորաբաժանումների ղեկավարներ, համալսարանական և բուհական համակարգի ներկայացուցիչներ, հյուրեր:

Ժողովը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, որը ժողովի հաստատմանը ներկայացրեց օրակարգը:

1. Գիտության ոլորտի վերակառուցման և վերափոխությունների ընթացքը ՀՀ ԳԱԱ-ում:

(Ձեկուցող՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյան)

2. Հայաստան-Սփյուռք կապերի աշխուժացման հիմնահարցը և ՀՀ ԳԱԱ-ի անելիքները:

(Ձեկուցող՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյան)

3. ՀՀ ԳԱԱ անդամների կանոնադրական պարտավորությունների կատարման մասին:

(Ձեկուցող՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուբուրյան)

4. ՀՀ ԳԱԱ Կանոնադրության նոր նախագծի կազմող հանձնաժողովի ստեղծելու մասին:

(Ձեկուցող՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյան):

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի «Գիտության ոլորտի վերակառուցման և վերափոխությունների ընթացքը ՀՀ ԳԱԱ-ում» զեկուցումից հետո ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին Ռոբերտ Սարգսյանը, ակադեմիկոս Յուրի Ալեքսանյանը, թղթակից անդամներ Գևորգ Պողոսյանը, Արա Ավետիսյանը, Հենրիկ Հովհաննիսյանը, գիտությունների դոկտոր Ալեքսանդր Գևորգյանը:



Ժողովի աշխատանքներին մասնակցում էր և ելույթ ունեցավ ՀՀ Գիտության և կրթության նախարար Լևոն Սկրտչյանը:

Օրակարգի մնացած երեք հարցերը քննարկվեցին միմյանցից ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների մասնակցությամբ: Ընդունվեցին համապատասխան որոշումներ:

«Գիտությունը» այսօրվա համարում հրապարակում է ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի «Գիտության ոլորտի վերակառուցման և վերափոխությունների ընթացքը ՀՀ ԳԱԱ-ում» զեկուցումը՝ մասնակի կրճատումներով:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս

Գիտության բարեփոխումների ընթացքը Գիտությունների ազգային ակադեմիայում

Գիտության բնագավառում բարեփոխումների պաշտոնական սկիզբը պետք է համարել 2006 թվականին հանրապետության նախագահի կարգադրությամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կողմից իրականացվող մշակումները: 2007 թվականի ընթացքում մշակվեց մի փաստաթուղթ, որն ստացավ «Գիտության ոլորտի բարեփոխումների հիմնադրույթներ» անվանումը: Ս.թ. օգոստոսի 30-ին կառավարության N 34 որոշմամբ հաստատվել է այդ փաստաթղթում ընդգրկված հիմնական միջոցառումների ծրագրի կատարման ժամանակացույցը:

Ժամանակացույցը բաղկացած է 16 կետից, որոնց իրականացմանը պետք է մասնակցի նաև Գիտությունների ազգային ակադեմիան: Այդ ծրագրի դրույթների մշակման համար, բնական է, կկազմվեն տարբեր հանձնաժողովներ, որոնց մեջ պետք է շատ ակտիվ մասնակցություն ունենան: Ահա ինչու Ակադեմիայի այն անդամները, որոնք ցանկություն ունեն մասնակցելու այդ աշխատանքներին, լավ կլինի, որ բաժանմունքներում տեղեկացնեն այդ մասին և հաշվառվեն:

Ոչ պաշտոնական բարեփոխումները ակադեմիայում սկսվել են 2006 թ-ից: Ի՞նչ էր անհրաժեշտ դրանք իրականացնելու համար:

Անհրաժեշտ էր կատարել այնպիսի կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, որոնք կնպաստեին գիտության զարգացմանը այս փուլում:

Բարեփոխումների իրականացումը գիտության զարգացմանը նպաստող այս պահի անհրաժեշտություն էր, թե երկրում ընթացող բարեփոխումների շարքի միջոցառումներից մեկը: Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այն օբյեկտիվ իրողություններին, որոնք առկա են մեր երկրի գիտության ոլորտում:

■ Մեր գիտությունը նախորդ 60 տարիների ընթացքում եղել է մեծ երկրի՝ ԽՍՀՄ-ի, հզոր գիտական համակարգի մի մասը: Դրանով էլ պայմանավորված է մեծ թվով գիտական կազմակերպությունների և նրանց բազմաձյուղ կառուցվածքների թիվը Հայաստանում:

■ Թերֆինանսավորումը ունի իր բացասական ազդեցությունը: Դժվար է պատկերացնել մի այլ երկրի նախ-

կին Խորհրդային տարածքում կամ Արևելյան Եվրոպայում, որտեղ գիտության ֆինանսավորումը լինի ավելի քիչ, քան մերը:

■ 2008 թ. այն կկազմի մոտ 3,6 միլիարդ դրամ կամ մոտ 10 միլիոն դոլար, որը ընդամենը Արևմուտքի մի խոշոր լաբորատորիայի ֆինանսավորումն է: Միջին հաշվով մեր յուրաքանչյուր աշխատողին ընկնում է 1 միլիոն դրամ, կամ 3,3 հազար դոլար: Գերմանիայում և Ֆրանսիայում այդ թիվը կազմում է 110-120 հազար դոլար, այսինքն՝ 30-40 անգամ ավելի, քան մերը:

■ Կադրերի թվի կրճատումը:

Եթե 1990 թ. հունվարի 1-ի դրությամբ մեր համակարգում աշխատում էր 7500 մարդ, ապա առ 1-ը հունվարի այն կազմում է ուղիղ կեսը՝ 3750 աշխատող, որոնցից միայն 2200 են գիտաշխատողներ:

■ Կադրերի այսպիսի պակասը ոչ միայն քանակական իմաստ ունի, այլ նաև որոշ գիտական պրոբլեմների համար դառնում է կրիտիկական, որի դեպքում անհրաժեշտ բարձր մակարդակով գիտական մշակումներ հնարավոր չէ կատարել:

■ Գիտական ինֆրակառուցվածքի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը: Սարքավորումները այժմ շատ թանկ են: Իսկ ինչպե՞ս են կատարվում բավականաչափ բարձր մակարդակի հետազոտություններ և տպագրվում, եթե աշխատանքները տեսական բնույթի չեն: Ուղղակի դեռևս օգտագործվում են Խորհրդային շրջանում ձեռք բերված սարքավորումները:

■ Գիտական աշխատանքի և գիտաշխատողի ընդհանուր ցածր վարկը հասարակության մեջ:

■ Կառավարման համակարգի դեմոկրատացման անհրաժեշտությունը, գիտության ֆինանսավորման նոր ձևերի ներդրումը և անկախ փորձագիտական համակարգի ստեղծումը:

Ինչպիսի՞ն է գիտության իրական վիճակը Հայաստանում: Նշենք, որ նրա վիճակը շատ ծանր է: Ընդհանուր առմամբ գիտությունը այսօր հանդիպել է մեծ դժվարությունների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ են վերափոխություններ, որոնք կնպաստեն նրա զարգացմանը և ոչ թե՛ նոր դժվարությունների ստեղծմանը: Իրավիճակի գնահատումը պետք է կատարվի՝

եյնելով գիտության կողմից ստացված արդյունքներից: Այս դեպքում պետք է լինեին չափանիշներ: Եթե այս տեսանկյունից քննարկենք իրավիճակը, ապա միանշանակ պետք է արձանագրել, որ ԳԱԱ-ի համակարգի գիտաշխատողները, ունենալով լուրջ դժվարություններ, այնուամենայնիվ, գիտության տարբեր բնագավառներում անկախության տարիներին և նույնիսկ վերջին հինգ տարիների ընթացքում արձանագրել են լուրջ գիտական արդյունքներ, որոնք ունեն միջազգային լայն ճանաչում:

Մասնավորապես, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատողները վերջին հինգ տարիների ընթացքում արտասահմանյան գիտական ամսագրերում տպագրել են 2 մենագրություն, 135 հոդված, շահել են 34 գիտական դրամաշնորհ՝ 2,1 միլիոն դոլար ֆինանսավորմամբ:

Հարց է առաջանում. այդպիսի ֆինանսավորմամբ ստացված արդյունքները շա՞տ են, թե՛ քիչ, ինստիտուտը լա՞վ է աշխատել, թե՛ վատ: Կարծում ենք, որ տեղ կա էլ ավելի լավացնելու աշխատանքը:

Ռադիկ ֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը վերջին 5 տարիների ընթացքում կատարել է կիրառական բնույթի պայմանագրային աշխատանքներ՝ 2,5 միլիոն դոլար ֆինանսավորմամբ: Ստացած միջոցների մի մասը զննցել է այդ աշխատանքներին մասնակցող գիտնականների աշխատավարձի ավելացմանը, մի մասն էլ ծախսվել է ինստիտուտի ինֆրակառուցվածքի թարմացմանը. ձեռք է բերվել մոտ 200 հազար ԱՄՆ դոլարի սարքավորում: Բացի կիրառական աշխատանքներից, ինստիտուտը վերջին 4 տարիների ընթացքում արտասահմանում (ԱՄՆ, Գերմանիա) տպագրել է երկու մենագրություն, արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում տպագրվել են 100-ից ավելի գիտական հոդվածներ:

Նման դրական ցուցանիշները արձանագրվել են, Մոսկովյան կենսաբանության, Կենսաֆիզիկայի, Հնագիտության և ազգագրության և այլ ինստիտուտներում:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ ԳԱԱ-ի համակարգի ինստիտուտներում կատարվում են որոշակի գիտական ուսումնասիրություններ, որոնք > 2

Գիտության բարեփոխումների ընթացքը...

➤ 1 Ճանաչվել են համաշխարհային գիտական հանրության կողմից: Դժվար է միանշանակ ասել, թե հատկացված սուղ ֆինանսական միջոցներով հնարավոր էր արդյոք այդ ծավալի աշխատանքներ կատարել: Կարելի է պնդել, որ հնարավոր չէր: Դրանում կհամոզվենք, եթե համեմատելու լինենք անկախության նույն ճանապարհով անցած ԱՊՀ երկրների հետ:

Սակայն սա չի նշանակում, որ մեր բոլոր կազմակերպություններում է կատարվում որոշակի լարված աշխատանք, սա չի նշանակում, որ մենք չենք զբաղվում ոչ մեծ կարևորություն ունեցող գիտական ուղղություններով: Սա չի նշանակում, որ շատ անելիքներ չունենք ստացված գիտական արդյունքները տնտեսության տարբեր ճյուղերում օգտագործելու նպատակով: Սա չի նշանակում նաև, որ անելիքներ չունենք գիտությունը երիտասարդ կադրերով համալրելու հարցում, և, վերջապես, խիստ անհրաժեշտություն կա բարոյական և ֆիզիկական մաշված սարքավորումները թարմացնելու:

Նշված բոլոր և այլ հարցերի լուծումը առաջիկա տարիների ընթացքում կկազմի բարեփոխումների ամբողջ համակարգը: Անցած մեկ տարվա ընթացքում նշված հարցերի ուղղությամբ կատարվել է որոշակի աշխատանք:

Նախ, բարեփոխումների գործընթացը սկսել ենք նախագահությունից՝ այն դարձնելով ավելի փոքրաթիվ ու գործունյա: Վերանայվել է նախագահության կառուցվածքը, որի հետևանքով ապարատի անձնակազմը կրճատվել է 20 մարդով: Որոշ կառուցվածքներում տարեց աշխատողները փոխարինվել են երիտասարդներով: Ելնելով գիտության զարգացման ներկա միտումներից կազմակերպման ընթացքի մեջ են երկու նոր բաժիններ՝ ինովացիաների և միջազգային գիտատեխնիկական ծրագրերի բաժինները: Կատարված կրճատումների և որոշ արտաբյուջետային միջոցների հաշվին էապես ավելացվել է ապարատի աշխատողների աշխատավարձը: Նախագահության կառույցները համալրվել են կոմայտերային տեխնիկայով:

Փաստորեն, անցած մեկ տարվա ընթացքում բարեփոխումները առնչվել են համակարգի ինստիտուցիոնալ: Կատարվել է բոլոր ինստիտուցիոնալ բազմակողմանի ուսումնասիրություն, կապված գիտության բովանդակության, կադրերի ապահովվածության, ինֆրակառուցվածքի հետ: Հանձնաժողովները ուսումնասիրությունների արդյունքով հանձնարարել են մի շարք երաշխավորություններ, կապված վերը նշված հարցերի հետ: Ցավոք, պետք է արձանագրել, որ դրանց մեծ մասը մնացել է թղթի վրա: Այդ պատճառով նախագահությունը շուտով բոլոր ինստիտուցիոնալ կապերի, թե նշված փոփոխություններից ինչն է կատարվել, իսկ ինչն չի կատարվել:

Ոչ առևտրային կազմակերպությունների օրենքի պահանջով 65 տարին լրացած տնօրենները ազատվել են տնօրենի պարտականություններից, և կատարվել են նոր տնօրենների ընտրություններ: Այդ գործընթացը կատարվել է 20 ինստիտուցիոնալ: Պետք է նշել, որ հիմնականում մեզ հաջողվել է ընտրել բանիմաց և ակտիվ կազմակերպիչներ: Նախկին տնօրենները հիմնականում նշանակվել են խորհրդակցանքներ: Պետք է ասել, որ հիմնականում զնում է համերաշխ համագործակցության գործընթաց, բացառությամբ 1-2 դեպքերի:

Իրականացվել է 2006 թ. սկսված համակարգի օպտիմալացումը: Այս գործընթացը ամենացավոտն էր, և մենք չէինք կարող հաշվի չառնել այսօր գոյություն ունեցող իրավիճակը: Մեր ընդհանուր թվաքանակը

կրճատվել է 2 անգամ՝ 7750-ի փոխարեն (1991-ի դրությամբ) ունենք ընդամենը 3700 աշխատող: Միանգամայն պարզ է, որ նույն ծավալով գիտական մշակումները մենք չենք կարող կատարել պահանջվող բարձր մակարդակով: Անհրաժեշտ է ունենալ մարդկային, նյութական և այլ ռեսուրսները կենտրոնացնել այն գիտական ուղղությունների վրա, որոնք ունեն ավանդույթներ, ապահովված են կադրերով և գիտենք, թե ինչ պետք է կատարվի մոտ ապագայում: Վերջապես մենք պետք է գիտակցենք, որ նոր պայմաններում զբաղվել նույն ծավալով գիտական մշակումներով այլևս հնարավոր չէ, որ այն եղել է մեծ և հզոր երկրի մենաշնորհը:

Ինչպես վերը նշվեց, 2006 թ. մեր համակարգում սկսեցինք իրականացնել բարեփոխումներ, որոնք, մեր կարծիքով, պետք է նպաստեն գիտության զարգացմանը: Այդ գործընթացի կարևոր մասն էր համակարգի օպտիմալացումը, որը, մի կողմից, նպաստակ ուներ ազատվել այն փոքր ստորաբաժանումներից, որոնք ժամանակին ստեղծվել էին ոչ թե գիտական խիստ անհրաժեշտությունից, այլ հիմնականում, որոշ անձանց ցանկություններով: Այսպես, օրինակ, Աշտարակում գտնվող ճարտարագիտական կենտրոնը միացվեց Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտին, Գառնիի երկրաֆիզիկական կենտրոնը՝ Երկրաբանական ինստիտուտին, Գյումրիի կոնստրուկտորական բյուրոն՝ Երկրաֆիզիկայի և Երկրաշարժագիտության ինստիտուտին: Բացի նշված կազմակերպություններից, այդ ծրագրով միավորվեցին նաև ավելի խոշոր հաստատություններ և ստեղծվեցին կենտրոններ: Օրգանական քիմիայի ինստիտուտի, Մոլեկուլի կառույցի կենտրոնի և Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի հենքերի վրա ստեղծվել է Դեղագործության և օրգանական քիմիայի ու դեղագործական տեխնոլոգիայի կենտրոնը, Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի ու Կենդանաբանության ինստիտուտի միացման արդյունքում ստեղծվել է Կենդանաբանության և ձկնաբանության կենտրոն, չորս տնտեսագիտական ինստիտուտներ միացվել են ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտին և այսօր ունենք տնտեսագիտության բազմաձև ինստիտուտ, որը կարող է զբաղվել տնտեսագիտության թե՛ տեսական և թե՛ գործնական խնդիրներով:

Այս գործընթացը պետք է շարունակվի՝ ունեցած ուժերը համադրելու համար, ինչն էլ պետք է նպաստի գիտության զարգացմանը և նրա առջև ծառացած խնդիրների լուծմանը:

Բարեփոխումների ընթացքը պետք է ապահովի մեր աշխատողների աշխատանքային պայմանների լավացումը և որոշակի սոցիալական հարցերի լուծումը: Պետք է նշենք, որ, փաստորեն, մեկ տարվա ընթացքում գրեթե կրկնապատկվել է մեր աշխատողների աշխատավարձը, ավելացվել է Ակադեմիայի անդամների պատվովձարը:

2008 թ.-ից կկրկնապատկվի գիտության թեկնածուներին և դոկտորներին տրվող հավելավձարը, կկրկնապատկվի ասպիրանտների կրթաթոշակը: Վարչապետը խոստացել է, բացի նշված ավելացումներից, տարվա ընթացքում էլի ավելացնել վճարումները:

Աշխատանքի պայմաններից ամենից կարևորը ինստիտուտների ջեռուցման համակարգի գործարկումն է: Այս ուղղությամբ տնօրենների և նախագահության կողմից կատարվել է որոշակի աշխատանք և հուսանք, որ 2008 թ.-ին, ընդամենը մի քանի ինստիտուտ կմնան առանց ջեռուցման: Հարցի լուծման ուղղությամբ կատար-

վում է գումարներ հայթայթելու աշխատանք:

Տարբեր ֆինանսական աղբյուրներից վերանորոգումներ են կատարվում կենտրոնական գրադարանում և որոշ ինստիտուտներում:

Այս տարվա ընթացքում ժամանակակից մակարդակով ավարտվել է Աղվերանի սիմպոզիումների տան վերանորոգումը: Այն կահավորվել է նոր կահույքով և ժամանակակից հարմարանքներով: Պատրաստ է գիտաժողովների դահլիճը 100 մարդու համար: Այժմ մեր գիտական ստորաբաժանումները Աղվերանում կարող են անցկացնել տարբեր բնույթի գիտական քննարկումներ, հանդիպումներ:

Մեր գիտության այսօրվա էական դժվարություններից է երիտասարդների պակասը մեր ստորաբաժանումներում: Առաջին հերթին սա բացատրվում է երիտասարդ կադրերի սոցիալական խնդիրներով և ապա գիտական գործունեության վերաբերյալ երաշխիքների պակասով:

Այս ուղղությամբ բարեփոխումների հայեցակարգով նախատեսված է որոշակի միջոցառումներ /թոշակի ավելացում, ուսուցումը արտերկրներում/: Այս առումով շատ կարևոր է գիտության և բարձրագույն կրթության ինտեգրման նոր ձևերի ներդրումը:

Խրախուսելի է, որ որոշ ինստիտուտների կողմից բուհական համակարգի հետ նոր կապեր են ստեղծվել: Այսպես, օրինակ, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը Սլավոնական համալսարանի հետ հիմնել են համատեղ ամբիոն, Ռադիոֆիզիկայի ինստիտուտը նույն Սլավոնական համալսարանի հետ ինստիտուտում հիմնել են ընդհանուր հետազոտական լաբորատորիա: Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը իրականացնում է մագնիստոսական ուսուցում ԵՊՀ-ի հետ: ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի հետ վաղուց ուսումնագիտական կապեր է հաստատել Հնագիտության և ազգագրության ինստիտուտը:

Ինտեգրման նոր ձևերից կարող է լինել համատեղ ուսումնագիտական կենտրոնների ստեղծումը գիտական բովանդակության հենքի վրա և ոչ թե ինստիտուտների մեխանիկական միացումը այս կամ այն բուհի հետ:

Վերջերս ստեղծվեց ԳԱԱ-ի գիտության զարգացման ֆոնդ: Հուսով ենք, որ ֆոնդի օգնությամբ հնարավոր կլինի լուծել որոշ խնդիրներ:

Մենք պետք է հետևողականորեն շարունակենք գիտության կառավարման դեմոկրատացումը:

Հարգելի գործընկերներ: Եթե մոտակա տարիներին մենք կարողանանք նույն արագությամբ և հետևողականությամբ իրականացնել բոլոր այն վերափոխումները, որոնք նշվեցին վերը, ապա կարճ ժամանակում, համոզված ենք, կունենանք ավելի շատ լուրջ գիտական արդյունքներ հիմնարար հետազոտությունների ուղղությամբ, մեր կողմից ստացված գիտական արդյունքները կներդրվեն երկրի տնտեսության տարբեր բնագավառներում և Ակադեմիան կվերադարձնի իր ավանդական բարձր վարկը մեր հասարակության մեջ, որը նա ունեցել է նախորդ 60 տարիների ընթացքում մեր հասարակության մեջ:

(ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը իր ելույթի առանձին դրույթների շուրջ տվեց լրացուցիչ բացատրություններ և մեկնաբանություններ, որոնք տեղ չեն գտել սույն հրապարակման մեջ):

«ՆԵՅՐՈՔԻՄԻԱ»


ամսագիրը 25 տարեկան է

Խորհրդային Միության և Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիաների նախագահությունների որոշմամբ 1981 թ. ստեղծվեց 2 ակադեմիաների համադրել «Նեյրոքիմիա» ամսագիրը, որի գլխավոր խմբագիր հաստատվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, այժմ ակադեմիկոս Արմեն Գալոյանը:

Ինչպես մեզ հաղորդեց Ա. Ա. Գալոյանը, միութենական այդ ամսագրի ստեղծումը հենց Հայաստանում, ամենին պարահական երևույթ չէր, քանի որ ակադեմիկոս Հրաչյա Բունիաթյանի ղեկավարությամբ երկար տարիներ հաջողությամբ փարվում էին հիմնարար հետազոտություններ նեյրոքիմիայի բնագավա-

ռում Կենսաքիմիայի ինստիտուտում և Հայաստանում: Դժբախտաբար, Հրաչյա Բունիաթյանը մահացավ նույն թվականի մարտի 19-ին:

Նոր ստեղծված ամսագիրը, ըստ էության, ԽՍՀՄ-ում միակ ամսագիրն էր, որ- փրկեց փրկագրվում էին նեյրոքիմիական հետազոտությունների ստեղծման և զարգացման փուլերը՝ ինչպես Խորհրդային երկրում, այնպես էլ արտասահմանում: Տեղեկատվական պակասի փարիններին ամսագիրը կարևոր դեր խաղաց նեյրոքենսաբանական կարևոր



հարցերը ներկայացնելով խորհրդային գիտնականներին: Միևնույն ժամանակ ամսագիրը իր վրա վերցրեց ԽՍՀՄ-ում փարվող գիտական աշխատանքների մասնաշաղկապը փարածումը արտասահմանում:

Սակայն 1992 թվականից սկսած ամսագրի կառուցվածքը և կազմակերպությունը հրապարակումը Հայաստանում դարձավ անհնարին: Պարճաբեք բաղա- րակալ և փրկեցական դժվարություններ էին, ԽՍՀՄ-ի փլուզումը, Հայաստանի համար փրկեցական ծանր իրավիճակը: 1995 թ. Ռուսաստանի Գիտությու-

յունների ակադեմիայի նախագահության որոշմամբ, ընդառաջելով ամսագրի գլխավոր խմբագիր, ակադեմիկոս Արմեն Գալոյանի առաջարկությանը, ամսագրի հրապարակությունը հանձնարարվեց «Նաուկա» հրապարակչությանը (Մոսկվա):

Չնայած այն ծանր ճգնաժամային իրավիճակին, որ ստեղծվել էր, հեպտորդային երկրներում, «Նեյրոքիմիա» ամսագիրը շարունակում էր իր օգտակար գործունեությունը ԱՊՀ-ի տարածքում:

Վերջերս Հայաստանի Գիտությունների ակադեմիան ակադեմիայում գումարվեց միջազգային գիտաժողով՝ նվիրված նեյրոքիմիայի և նեյրոհիմնոլոգիայի ակադեմիկոս խնդիրներին: Ջերմորեն ողջունելով միջազգային գիտաժողովի մասնակիցներին, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը խոսեց նաև «Նեյրոքիմիա» ամսագրի 25-ամյա հոբելյանի, նրա միջազգային մեծ ճանաչման և ակադեմիկոս Ա. Գալոյանի խո-



րաստվելու համար:
ԳԱՍ նախագահի ղեկավարությամբ գործող նախաձեռնող խումբը պատրաստել է միջոցառումների մի բաժանակն ընդարձակ ծրագիր, վերջին երկու տարիներին կապ է հաստատել և միջազգային (Միջազգային Աստղագիտական Միություն, Գիտական Միությունների Միջազգային խորհուրդ), և ռուսական այն գիտական կառույցների հետ, որոնք ղեկավարել կամ որոնց հետ սերտորեն աշխատել է Վիկտոր Զամբարձովյանը: ՌԴ Գիտությունների ակադեմիան, ինչպես նաև Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանն ու Պոլկովոյի աստղադիտարանը որոշում են կայացրել նրա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջաններ անցկացնել Մոսկվայում և Սանկտ-Պետերբուրգում:
Հորելյանական միջոցառումների

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Հայ ժողովրդի պատմության մեջ փոքր չէ այն անհատների թիվը, ովքեր իսկապես հարստացրել են ազգային մշակույթն ու արվեստը, հասել մեծ բարձրությունների և իրավամբ դարձել համազգային ճանաչման ու սիրո առարկա: Քիչ չէ նաև նրանց թիվը, ովքեր միջազգային ճանաչման են հասել՝ ամբողջ կյանքն անցկացնելով օտար միջավայրում, դառնալով այդ միջավայրի արտահայտությունը, պահպանելով կամ չպահպանելով ազգային պատկանելության զգացումը: Բայց առանձնապես մեծ չէ մեր ազգային միջավայրում ապրած և ստեղծագործած գիտնականների թիվը, որոնք հասել են միջազգային ամենալայն ճանաչման և միաժամանակ իրականացրել հայրենանվեր գործունեություն: Հայաստանում: Վերջիններիս թվում իր ծառայություններով էապես առանձնանում է Վիկտոր Զամբարձովյանը:

Նպատակ չունենալով այսօր մանրամասնորեն կանգ առնել նրա անցած կյանքի ու կատարած գործունեության վրա, այնուամենայնիվ կցանկանայի ընթերցողի ուշադրությունը հրավիրել նրա հիշատակի նկատմամբ մեր վերաբերմունքի վրա: Թվում է, թե ակնածանքից ու նրանով հպարտանալուց զատ որևէ այլ վերաբերմունք չի եղել: Ոչ նրա երկարատև ու բեղմնավոր կյանքի ընթացքում, ոչ էլ նրա մահից հետո:

Այն, որ հայկական դրամի վրա տպագրվեց նրա պատկերը, նրանով հիանալու ու նրա հանդեպ ակնածանքի արտահայտություն էր: Այն, որ Բյուրակահի աստղադիտարանը կոչվեց իր հիմնադրի անունով, նույնպես այդ խորագույն հարգանքի արտահայտություն էր: Բայց փորձեք պարզել, թե երևանի քաղաքացիներից քանիսն է տեղյակ Զամբարձովյան փողոցի գոյության և առավել ևս նրա տեղի մասին: Ակադեմիայի նախագահության և երևանի պետական համալսարանի շենքերում գտնվող բանդակներից բացի այլ արձան, ինչպիսիք ունեն մեր ազգի մյուս մեծերը, նա չունի:

2008-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու տակ նշվելու է երկու մեծ հայերի՝ Վիկտոր Զամբարձովյանի և Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակը: Հայ արվեստի և մշակույթի վարպետները հսկայական խանդավառությամբ են նախապատրաստվում ամերիկահայ մեծանուն գրողի հոբելյանին՝ հեռուստատեսությամբ ու զանգվածային լրատվության այլ միջոցներով կոչ անելով գուժար հանգանակել և երևանում կանգնեցնել նրա հուշարձանը: Իսկ ի՞նչ է արվում մեր խոշորագույն գիտնականի հիշատակի հավերժացման համար, ի՞նչ են անում գիտնականներն այդ նպատակով և վերջապես ի՞նչ է անում մեր պետությունն իր առաջին ազգային հերոսներից մեկի (թեկուզ նաև մոռանալով, որ նա եղել է նաև սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս. ներկայումս այդ բանը հաճախ դիտարկվում է որպես թերություն) հոբելյանին պատ-

ծրագրով Հայաստանում նախատեսվում է կազմակերպել միջազգային գիտաժողով, երիտասարդ աստղագիտների միջազգային դպրոց, պատանի աստղագետների միջազգային օլիմպիադա, հայագիտական ու փիլիսոփայական կոնգրեսներ, գիտաժողովներ երևանի պետական համալսարանում, հիշողությունների գրքի հրատարակում: Հայաստանի կենտրոնական բանկն արդեն հայտարարել է մրցույթ հուշադրամի էմբլի համար, Ակադեմիան հայտ է ներկայացրել մամուլային տպելու համար: Կառավարությանը ներկայացված ծրագրով նախատեսված է նաև ասֆալտապատել դեպի Վիկտոր Զամբարձովյանի շիրիմ տանող ճանապարհը, վերակառուցել Բյուրակահի աստղադիտարանի մուտքը, վերանորոգման աշխատանքներ կատարել նրա տուն-թանգարանում և այլն:

Ծրագրային առումով հոբելյանը բավականին հարուստ է և նախատեսված բոլոր միջոցառումներն էլ չափազանց կարևոր են հոբելյանին համապատասխան շուրջ ու բովանդակություն հաղորդելու տեսակետից: Եվ չնայած դրան, Վիկտոր Զամբարձովյանի հիշատակի հավերժացման տեսակետից հատկապես կարևոր պետք է համարել երևանում նրա հուշարձանը կանգնեցնելու առաջարկությունը: Ըստ որում՝ այդ հուշարձանը պետք է կանգնեցնել քաղաքի կենտրոնում, այնտեղ, որը համապատասխանում է նրա մեծությանը: Նախաձեռնող խումբն առաջարկում է այն կառուցել Գյուղատնտեսական ակադեմիայի դիմաց գտնվող պուրակում, որը շրջապատված է գիտակրթական խոշոր ու հայտնի հաստատություններով: Բացի Գյուղակաղեմիայից այստեղ են երևանի պետական համալսարանի հին շենքը՝ երկու ֆակուլտետներով ու ճարտարագիտական համալսարանը, Ազգային գրադարանը, երևանի պետական համալսարանի աստղադիտարանը: Ավելի հարմար տեղ չի էլ կարելի գտնել:

Նախաձեռնող խումբը, որը մինչև օրս զգալի աշխատանք է կատարել, շարունակում է իր գործունեությունը իր իրավասության շրջանակներում: Սակայն հիմա արդեն կառավարությունը պետք է իր վերաբերմունքն արտահայտի հայ ժողովրդի այդ ակնավոր զավակի հանդեպ: Իսկ այդ վերաբերմունքի արտահայտությունն, այսպես թե այնպես, դառնալու է այն ցուցանիշներից մեկը, թե ինչպես ենք մենք գնահատում մեր մեծերին: Որպեսզի այդ ամենն իրականություն դառնա, անհրաժեշտ է նաև մեր գիտնականների ցանկությունն ու ակտիվ գործունեությունը: Բնականաբար, այդ ամենն արդեն Վիկտոր Զամբարձովյանին պետք չէ, դա պետք է այն ողջերին, որոնք գնահատում են ազգային արժեքները և դրանց մեջ շարունակում են տեսնել գիտությունն ու կրթությունը:

Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բյուրակահի աստղադիտարանի
պնօրեն

(Սկիզբը նախորդ համարներում)

Սակայն Տիգրանի բացարձակ հաղթանակը Վրաստանի չեմպիոնատում, ի վերջո համոզեց բոլորին նրա առավելությունը: Դպրոցը ցնծության մեջ էր: Տիգրանը՝ ԽՍՀՄ պարամիների չեմպիոն, այժմ Վրաստանի չեմպիոն մեծահասակների մեջ: Մենք հասկանում էինք նաև այդ փաստի կարևորությունը նաև այնքանով, որքանով մենք գիտեինք, թե ինչպիսի ուժերի հետ գործ ուներ Տիգրանը: ԽՍՀՄ վարպետ Էրբալիձե, ԽՍՀՄ վարպետ Մևրոկին, վարպետության թեկնածու Բուսլան, վարպետության թեկնածու Բլադիմիր, վարպետ Բրուշտեյն, Բրավինսկի, Գեորգաձե և ուրիշ առաջնակարգ շախմատիստներ, թվով՝ 15, բոլորն էլ հասուն և իրենից փարիքով մեծ...

Մյուս օրը Տիգրանը եկավ դպրոց: Դպրոցի դիրեկտորի գլխավորությամբ ուսուցանեցում բոլորը շնորհավորեցին նրան: Տիգրանը սովորականի նման լուրջ, հանգիստ լսեց բոլոր գո-

հանկարծ իմացանք, որ Տիգրանը մեկնել է երևան: Նրա բացակայությունը մեզ համար զարմանալի չէր: Նա հաճախ էր բացակայում փարքեր մրցույթներին մասնակցելու պարճառով: Ցուրպ աշնանային օրեր էին, խոնավ օդը թափանցում էր մինչև ոսկորներս, մեծամասնությունս համարյա առանց վերարկուի էինք գնում դպրոց: Ասում էին, որ երևանում ձմեռը ավելի ցուրտ է լինում: Մեզ անհանգստացնում էր այդ լուրը, որովհետև Տիգրանը մի քիչ վարառողջ էր վերջին շրջանում: Նրան անհագստացնում էր ականջի բորբոքվածությունը, որը, կարծես, արդեն խրոնիկ բնույթ ուներ: Ոչ մի փեղեկություն նրանից չունեինք, ոչինչ չէին ասում նաև հին դպրոցի իրենց դասարանի փղաները, Վիգենը, Վազգենը, որոնք շարունակում էին իրենց հին մտերմությունը և պահպանեցին այն մինչև վերջ:

Իսկ մենք շարունակում էինք հաճախել պիոներ պալատի և քաղաքային շախմատի ակումբի պարապմունքներին: Տիգրանը երևանից վերադարձավ զարմանք և զայուց անմիջապես

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ. դպրոցական տարիներ



վեստները, և մտավ դասարան: Նույն ձևով էր նրա պահվածքը նաև նախորդ մրցույթների ժամանակ, երբ նա, ինչ-որ անհասկանալի ձևով, միայն վերջին փուլերում հայտնվում էր 2-րդ կամ 3-րդ փեղեկում, համարյա միշտ Վրաստանի չեմպիոնությունը գիջելով վարպետ Էրբալիձեին: Դեռ մեկ փարի առաջ, Վրաստանի չեմպիոնատի օրերին, երբ մենք համարյա համոզված էինք, որ Տիգրանն է շահելու, հանկարծ վերջին փուլում, առաջ անցավ Էրբալիձեն: Մենք զայրությամբ հարցրեցինք թե ո՞նց եղավ, նա հանգիստ պարասխանեց. «Տղաներ, ոչինչ, դա դեռ չի նշանակում, թե ես նրանցից վար եմ խաղում, հետո կերևա»:

Եվ իրոք՝ հաջորդ 2 փարվա ընթացքում նա 1 կարգայինից դարձավ ԽՍՀՄ վարպետության թեկնածու և ԽՍՀՄ սպորտի վարպետ: Նա այդ ամենը ընդունում էր սառնասրտությամբ, կշռադարձված, և ամենակարևորը՝ ոչ հուսալքվում էր անհաջողություններից, ոչ էլ մեծամտություն հաջողություններից:

1945 թվականն էր: Պարբերազմը ավարտվել էր: Բոլորս ուրախ շունչ քաշեցինք, սպասում էինք մեր հարազատների և քաղաքացիների վերադարձին: Դպրոցում եռուզեռ էր, մեր հեղափոխությունների շրջանակը ընդգրկեց նաև մեր Հայաստանը: Սակայն դպրոցի փոխաներին և Տիգրանին մոփիկ կանգնած ընկերներին զարմացնում էր նաև այն, թե ինչու Հայաստանը չի հեղափոխվում Տիգրանով, ինչու՞ չի օգնում նրան: Մենք Հայաստանի հետ այն փարիներին ոչ մի կոնֆակտ չունեինք, համարյա ոչինչ չգիտեինք հարկապես Հայաստանի շախմատային առօրյայից: Գիտեինք միայն Գասպարյանի մասին, քանզի զբաղվում էինք նրա էրյուդները լուծելով ու լուսաբանելով: Նպար էինք, որ ունենք ճանաչված և համաշխարհային ճանաչում ունեցող շախմատային կոմպոզիցիաների հեղինակ-գրողներ: Եվ միայն այդքանը: Հասկանում էինք նաև, որ Հայաստանը այլևս Չարենցի «պարոն Մարութի» և «Մագուրի Նամոյի» Հայաստանը չէր արդեն, բայց ինչու Գասպարյանից բացի չկային ճանաչված շախմատիստներ, չէինք հասկանում: Թե պարզապես չգիտեինք: Եվ, վերջապես, մեր դժգոհությունները վերջացան: Սկսվել էր 8-րդ դասարանի դպրոցական շրջանը:

հետո եկավ պիոներ պալատ: Օ՛ գարմանք, Տիգրանը առնականացել էր, կազդուրվել: Հագին բարձրորակ, մուգ գույնի փաթ վերարկու էր: Տիգրանի փոփոխությունը մեզ ապշեցրեց: Հայաստանը միանգամից մեր աչքին դարձավ այն երանելի վայրը, որի հետ, երևի, մենք կկապենք մեր հեղափոխ կյանքը՝ դպրոցն ավարտելուց հետո: Բայց դա դեռ հեռու էր. նոր ծրագրերով դպրոցի ուսուցման ժամկետը փոխված էր: Ավարտելու էինք 11 դասարանը: Իսկ մենք միայն 8-րդ դասարանում էինք: Մի քանի օր գրուցում էինք միայն Հայաստանի մասին: Նա մեզ պարմում էր իր նոր ծանոթների մասին, իր կարծիքով Հայաստանում արդեն այն ժամանակ ձևավորվում էր շախմատային լուրջ դպրոց, հարկապես լավ էր խոսում Քալաշյան եղբայրների մասին: Մենք հեղափոխ իմացանք, որ նա հյուրընկալվել է հենց նրանց ընտանիքում: Գալուց անմիջապես հետո նա մասնակցեց Վրաստանի շախմատային առաջնությունը: Երևի արդեն որոշել էր փեղափոխվել Հայաստան, նա գրավեց միայն 5-րդ փեղը, չնայած ունեցավ բազմաթիվ փայլուն հաղթանակներ:

Նա փեղափոխվեց երևան, թողնելով 8-րդ դասարանը: Ավարտեցինք մենք 8-րդ դասարանը առանց Տիգրանի, փարեկերին նկարվեցինք ամբողջ դասարանով, իբրև միջանկյալ ավարտական դասարան, և շափ էինք ափսոսում, որ Տիգրանը մեզ հետ չէր: Բայց մենք ուրախանում էինք և միխթարվում նրանով, որ նա Հայաստանում է...

Հովհաննես ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տեխն. գիտ. թեկնածու
Գալուս, Փլենո, ԱՄՆ

Ֆրեդ ԿԱՎԼԻ

➤ 4 ընդլայնման հիմնահարցի լուծմանը, որի հանգույցային օղակը ծառափառեսակների տնկիների արագացված արտադրության կազմակերպումն է: Ուսումնասիրությունների արդյունքում մշակվել են մի շարք արժեքավոր ծառափառեսակների (կաղնի, սոճի, բարդի, հաճարենի, սոսի, բրնձի, ընկուզենի, կենսածառ, կիպրոսենի և այլն) բարձր կաշտակագործություն ապահովող տնկիների հիդրոպոնիկ արտադրության տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս մեկ հեկտար հիդրոպոնիկումից ստանալու մշտադալարների 100-120 հազար, ծառատեսակների՝ 400-500 հազար և քիստեսակների՝ 700 հազարից - 1 մլն հատ տնկիներ:

2000 թ. ՀՀ ԳԱԱ Նախագահության որոշմամբ ինստիտուտի Էջմիածնի գիտա-արդյունաբերական հիդրոպոնիկական բազայի հիման վրա ստեղծվեց, «Գարման» հայ-ամերիկյան

րում:

Հրատարակվել է նաև ինստիտուտի «Հանդիմաններ» 30 համար, շուտով կիրառարակվի նաև քիվ 31-ը՝ նվիրված ինստիտուտի 60-ամյակին:

Այսօր, առանձնակի հպարտությամբ, կարող ենք արձանագրել, որ ինստիտուտի կարևորագույն և հիմնական գիտական մշակումները են դրվել արտադրության մեջ: Անցած ժամանակաշրջանում հիդրոպոնիկայի բնագավառում, կատարվել են շուրջ 25 խոշոր ներդրումներ: Նշենք դրանցից միայն մի քանիսը:

1. Հանրապետության 3 բույսաբուծական ֆարքիկաներում (Էջմիածնի, Բարձրաշենի, Երևանի) կառուցվել են 500-600 կգ/օր հզորությամբ կանաչ վիտամինային կերի հիդրոպոնիկ արտադրության տեղակայանքներ /1975 և 1977 թվականներին/:

2. 1976 թ. Էջմիածնի շրջանում կառուցվեց

րատվության կարգով, ստանում է 2 միջազգային պարբերականներ. Հոլանդիայից «Flower Tech»-ը և Ավստրալիայից «Hydroponics»-ը, որը հիդրոպոնիկայի խնդիրներին նվիրված միակ ամսագիրն է աշխարհում:

Ինստիտուտը զգալի ձեռքբերումներ ունի նաև դրամաշնորհների ստացման և այլ աղբյուրներից ֆինանսների հայթայթման ուղղությամբ: 2001 թ. առ այսօր ինստիտուտի աշխատակիցները շահել են 7 դրամաշնորհ (ICSC-World Laboratory, DAAD, NFSAT, INTAS, Max-von-Bauernfeind Society of TUM և այլն) շուրջ 600000 ԱՄՆ \$ ընդհանուր գումարով: Լրացուցիչ ֆինանսավորման մի զգալի մասի հաշվին հիմնովին վերանորոգվել և վերակառուցվել են ինստիտուտի Երևանի հիդրոպոնիկական փորձարարական, Էջմիածնի հիդրոպոնիկական գիտա-արդյուն-

Ինստիտուտը կշարունակի...

համատեղ ձեռնարկությունը: Կատարվեց շուրջ 185000 ԱՄՆ \$ ներդրում: Ինստիտուտում մշակված մի շարք դեղատու և համեմունքային մշակաբույսերի հիդրոպոնիկ աճեցման ֆիտոտեխնոլոգիաների ներդրումն շնորհիվ 2000-2001 թթ. աշատեղ արտադրվեց մոտ 12 տոննա օղաչոր, որակյալ և էկոլոգիապես մաքուր բուսահումք: Մակայն պարզվեց, որ այդ ծավալի դեղահումքի իրացումը մեր հանրապետության ներքին շուկայում գործնականում անհնար է՝ այդ բանակի պահանջարկի բացակայության պատճառով, իսկ մեր ջանքերը՝ դուրս գալ արտաքին շուկա, ցավոք, դեռևս չեն պսակվել հաջողությամբ: Այսինքն՝ մենք ստիպված ենք արձանագրել, որ հանրապետության տնտեսությունը այսօր դեռևս պատրաստ չէ ներդնելու նորագույն, ժամանակակից և առաջատար բարձր տեխնոլոգիաները, ինչպիսին է նաև, անտարակույս, բույսերի հիդրոպոնիկ արտադրությունը:

Այսօր էլ ինստիտուտի Էջմիածնի գիտա-արդյունաբերական բազան իր շուրջ 23 հազար քառ. մետր հիդրոպոնիկ մակերեսով միանգամայն պատրաստ է կատարելու տարբեր կազմակերպությունների ու անհատ ձեռներեցների համապատասխան պատվերները:

Հիդրոպոնիկայի բնագավառում ինստիտուտում տարվող հետազոտություններում մենք շատ կարևորում ենք բույսերի անհող արտադրության սկզբունքային նոր և էժան համակարգերի ստեղծման աշխատանքները: Այդ նպատակով մեր նախաձեռնությամբ և ղեկավարությամբ դեռևս 1986 թ. ստեղծվեց ժամանակավոր հետազոտական խումբ, որն իր առջև խնդիր էր դրել մշակել բույսերի անհող աճեցման նոր, քիչ ծախսատար, առավել ավտոմատացված առաջատար նոր եղանակ: Դրանցից առավել հեռանկարայինը պոլիմերային թաղանթի օգտագործմամբ «ջրաշիբային հիդրոպոնիկական համակարգ» է (Майрапетян и др., 1995; Майрапетян, 2000; Maïrapetyan, 2000), որը վերջին տարիներին հետազոտական մեկ այլ խմբի ջանքերով կատարելագործվեց, ներդրելով նոր տարատեսակներ՝ բույսերի տարբեր խմբերի անհող արդյունաբերական արտադրության համար:

Նոր հիդրոպոնիկ համակարգն իր մեջ ներառում է հետևյալ տարատեսակները.

1) Համառարած (ՀՀ Գյուտի արտոնագիր № 1988 A2),

2) Գլանալին (ՀՀ Գյուտի արտոնագիր № 1946 A2),

3) Ալյուսալին (ՀՀ Գյուտի արտոնագիր № 1989 A2),

4) Բազմաշառ տնկարկային (ՀՀ Գյուտի արտոնագիր № 1849 A2):

Այսպիսով, այսօր մենք կարող ենք հայտարարել, որ ինստիտուտի շուրջ 20-ամյա ջանքերը և պրպտումները պսակվեցին հաջողությամբ: Առաջին անգամ, իր 60-ամյա պատմության մեջ ընթացքում, ինստիտուտում մշակվել է բույսերի անհող՝ հիդրոպոնիկ արտադրության նոր համակարգ, իր չորս տարատեսակներով, որոնց համար 2006-07թթ. ստացվել են վերը նշված չորս գյուտերի արտոնագրեր: Ավելորդ չեն համարում նշել, որ այս նոր համակարգը, փաստորեն, բույսերի անհող արտադրության աշխարհում գոյություն ունեցող 5-րդ եղանակն է (ջրային մշակույթ՝ հիդրոպոնիկ կամ NFT, գլաբարա-խարամային մշակույթ, ռոբիլով և աերոպոնիկա):

Ինստիտուտի աշխատակիցների կողմից այդ ժամանակաշրջանում հրատարակվել են 15 մենագրություն և 1200-ից ավելի գիտական աշխատանքներ՝ տպագրված հայերենական և միջազգային հեղինակավոր պարբերականներ-



1,5 հեկտար մակերեսով բացօթյա հիդրոպոնիկում տարեկան 150-180 տ վարդաբույր խորդենու արտադրության համար:

3. 1983 թ. Էջմիածնի շրջանում կառուցվեց 2,3 հեկտար մակերեսով բացօթյա հիդրոպոնիկում տարեկան 1,0-1,2 մլն հատ խաղողի տնկիների արտադրության համար:

4. Եղվարդի ամսանագահական ու Բաղրամյանի խոզաբուծական համալիրներում կառուցվել են 500/օր հզորությամբ միաբջջ ջրիմուռ քլորելայի հիդրոպոնիկ արտադրության տեղակայանքներ՝ քլորելայի սուսպենդիայի («կանաչ կար») արտադրության համար (1984 և 1990 թվականներին):

5. 1987 թ. Մերձավանում (Էջմիածնի շրջան) կառուցվեց 3 հա մակերեսով բացօթյա հիդրոպոնիկում տարեկան 1,5 մլն հատ խաղողի տնկիների արտադրության համար:

6. 1990 թ. Արմավիրի շրջանի «Մեխորատոր» տնտեսությունում կառուցվեց ջերմատնային հիդրոպոնիկում 2 հեկտար մակերեսի վրա՝ վարունգի ու լոլիկի արտադրության համար և վարդաբույր խորդենու արտադրության բացօթյա հիդրոպոնիկում՝ 10 հեկտարի վրա՝ «ջրաշիբային հիդրոպոնիկայի» եղանակով:

7. 1990 թ. Գեղարքունիքի մարզում (Գավառում) 6 հեկտար ավազուտի վրա կառուցվել է համեմունքային քեյի (դաղձ, ուրց և այլն) հիդրոպոնիկ արտադրության և անթափոն վերամշակման կոմբինատ՝ «ջրաշիբային հիդրոպոնիկայի» նորագույն եղանակով և այլն:

Բոլոր 25 ներդրումները կատարվել են հանրապետության կառավարության և այլ վերադաս մարմինների համապատասխան որոշումներով: Ներդրական աշխատանքների շարքը, հասկանալի պատճառներով, ցավոք, ավարտվում է 1990թվականով:

Ինստիտուտը միջազգային լայն կապերի մեջ է «Բույսերի անհող մշակույթի միջազգային միության» (Հոլանդիա), Ամերիկայի հիդրոպոնիկայի միության, ԱՄՆ Գյուդատնտեսության նախարարության Գյուդատնտեսական հետազոտական սերվիզի, Ազգային կլոնալ սաղմնապլանային շտեմարանի, «Այգեգործական գիտությունների միջազգային միություն» (Բելգիա), Եվրոպայի բանջարեղենի հետազոտության և մշակումների կենտրոնի (Բելգիա), Այգեգործության տեխնոլոգիայի և Բեռլինի համալսարանի, Մյունխենի տեխնիկական և Արգենտինայի պետական բժշկական համալսարանների, Բարայելի Տեխնոլոգիական բույսերի, Ռ-Դ ԳԱ Բույսերի ֆիզիոլոգիայի (Մոսկվա), Բույսերի ֆիզիոլոգիայի և կենսաբանության (Ք. Իրլանդիա), Պարագիտությունի, Դեղատու և արոմատիկ բույսերի, Ագրոֆիզիկայի, Սիմֆերոպոլի Երթրաբույսաբանության և դեղատու բույսերի, Տաշկենտի Բույսերի ֆիզիոլոգիայի և գենետիկայի ինստիտուտների, Իրլանդիայի Բուսաբանական այգու հետ և այլն:

Վերջին 10 տարին ինստիտուտը, նախ-

նաբերական և Դիլիջանի անտառային հիդրոպոնիկական կայանները, ինչպես նաև իրականացվել են ինստիտուտի կենտրոնական լաբորատոր մասնաշենքի մասնակի ջեռուցման աշխատանքները:

Այսօր ինստիտուտի առջև ծառացած կարևորագույն խնդիրները, մեր կարծիքով, հետևյալն են.

1. Ինստիտուտում մշակված, կիրառական կարևոր նշանակություն ունեցող գիտական հետազոտությունների և ֆիտոտեխնոլոգիաների առևտրայնացում:

Այս իմաստով մենք ողջունում ենք ԳԱ ղեկավարության նախաձեռնությունը՝ Նախագահությանը կից ստեղծել գիտական մշակումների առևտրայնացման և ինովացիայի խումբ, որի նպատակապես աշխատանքը կարող է կտրուկ բարձրացնել Արևելափայլի համակարգում, այդ թվում և մեր ինստիտուտում, կատարվող հետազոտությունների կիրառման արդյունավետությունը:

2. Ինստիտուտում մշակված, վերը քվարկված և արդեն արտոնագրված 4 նոր հիդրոպոնիկական համակարգերի՝ որպես բուսական հումքի արտադրության ժամանակակից բարձր տեխնոլոգիայի, ներդրումը արտադրության մեջ:

